



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՅԱՅՈՅ
ՐԻՄԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱԶԳ. Վ. ԵՒ Ա. ՇԱՄԼԵԱՆ
 ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄՐՑԱՆԱԿԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ**

Նախօրօք ճշդուած ժամադրութեամբ մը, Չորեքշաբթի, 7 Յունիսի կեսօրին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց Ազգ. Վահան եւ Անուշ Շամլեան վարժարանի մրցանակաւոր 5 աշակերտներու այցելութիւնը, ընկերակցութեամբ վարժարանի ուսուցչական կազմի ներկայացուցիչներու եւ ծնողներու: Աշակերտներն էին Դալար Ալեքսանեան, Զլէր Առաքելեան, Շանթ Գոլյումճեան, Գօգօ Պոռնազեան եւ Զոլէթ Յամամա, իսկ ընկերակիցներն էին վարժարանի փոխ տնօրէն Տիկ. Ռիթա Գաբրիէլեան, գիտական բաժանմունքի վարիչ եւ գիտութեանց ուսուցչուհի Տիկին Լիտա Գեորգեան, իսկ ծնողները՝ Տիկ. Լինտա Ալեքսանեան ու Տէր եւ Տիկին Վաչէ եւ Թալին Գոլյումճեան:

Գիտութեանց ուսուցչուհին՝ Տիկ. Գեորգեան, բացատրութիւններ տուաւ ներկայ հինգ աշակերտներուն եւ վարժարանի այլ աշակերտներուն՝ Կարէն Արապեանի, Ճոն Ազիզեանի եւ Դուին Պապեանի նուաճումներուն մասին: Անոնք անցեալ ամիսներուն Շամլեան Վարժարանը ներկայացուցած են Յայկական Վարժարաններու Գիտական Մրցանքին (Armenian Science Olympiad) ու Լոս Անճելըս գաւառի ու Քալիֆորնիոյ միջ-դպրոցական գիտական մրցումներուն (Los Angeles County Fair եւ California State Science Fair), ապահովելով առաջատար դիրքեր եւ յատուկ մրցանակներ: Տիկ. Գեորգեան նաեւ բացատրութիւններ տուաւ իրաքանչիւր աշակերտի աշխատանքին բնոյթին ու հետաքրքրութիւններուն մասին:

Հիւր աշակերտները իրենց կարգին յաւելեալ տեղեկութիւններ տուին Առաջնորդ Սրբազանին, որ գնահատեց անոնց ջանասիրութիւնն ու զիրենք շնորհաւորեց արձանագրուած յաջողութեանց համար: Առաջնորդ Սրբազանը նաեւ գնահատանքով արտայայտուեցաւ ուսուցիչներուն եւ ծնողներուն նուիրումին մասին, ի խնդիր մեր պատանի աշակերտներուն միտքերուն ու հոգիներուն կազմաւորման, մաղթելով, որ այս աշակերտները նոյն նախանձախնդրութեամբ շարունակեն իրենց աշխատանքը, պատիւ բերելով իրենց ընտանիքներուն, վարժարանին ու մեր ժողովուրդին:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը ներկաներուն յանձնեց յուշանուէրներ:

CHAMLIAN SCHOOL SCIENCE FAIR FINALISTS VISIT THE PRELATE

On Wednesday, June 7, five finalists from Chamlian School visited His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, accompanied by representatives of the school staff and parents. The students, Talar Alexanian, Claire Arakelian, Shaunt Kouyoumdjian, Koko Bornazyan, and Collette Hamamah, were joined by Assistant to the Principal Mrs. Rita Kaprielian, Science teacher Mrs. Lida Kevorkian, parents Mrs. Linda Alexanian, and Mr. and Mrs. Vatche and Taline Kouyoumdjian.

Mrs. Kevorkian spoke of the accomplishments of the five above-mentioned students, as well as of students Garen Arabian, John Azizian, and Dveen Babaian. All had in recent months participated in the Armenian Science Olympiad, the Los Angeles County Fair, and the California State Science Fair, securing awards at all three competitions. Mrs. Kevorkian also gave details about each student's field of interest.

The students themselves also had an opportunity to convey further details to the Prelate, who commended them for their achievements. The Prelate also commended the school staff and parents for their support and involvement and wished the students success as they continue to bring pride to their parents, school, and community.

Prior to their departure, the Prelate presented the guests with mementos.